

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ  
ԱԿՐԵՂԻՏԻՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ****«Ամերիաբանկ» ՓԲԸ**

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն,

Երևան 0015, Վազգեն Սարգսյան 2

Հեռ.՝ (374 10) 56 11 11

Ֆաքս՝ (374 10) 51 31 33

Էլ. հասցե՝ office@ameriabank.am; www.ameriabank.am

***Տվյալ տեղեկատվական ամփոփագրում ներկայացվում են կորպորատիվ հաճախորդներին  
ակրեդիտիվի տրամադրման պայմանները***

***Նշված տեղեկություններին կարող եք ծանոթանալ նաև Ամերիաբանկ ՓԲԸ ինտերնետային  
կայքում՝ [www.ameriabank.am](http://www.ameriabank.am):***

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն կորպորատիվ հաճախորդներին առաջարկում է  
ակրեդիտիվի հետևյալ տեսակները.

- չհաստատված ակրեդիտիվներ
- հաստատված ակրեդիտիվներ /բացի «Ամերիաբանկ» ՓԲԸ-ից, վճարման պարտավորություն է ստանձնում նաև մեկ այլ բանկ/

**Ակրեդիտիվի ծածկույթը՝**

1. դեպոնացվող դրամական միջոցներ,
2. Բանկի կողմից Հաճախորդի ակրեդիտիվային գործարք իրականացնելու նպատակով սահմանված վարկային սահմանաչափի/գծի<sup>1</sup> ներքո:

**[Ակրեդիտիվի գծով միջնորդավճարների/կումիսիոն վճարների կետանցման դեպք/եր/ուս  
տույժի չափը՝ 0,13 տոկոս, որը հաշվարկվում է ժամկետանց գումար/ներ/ի նկատմամբ,  
կետանցի յուրաքանչյուր օրվա համար:](#)**

**Ակրեդիտիվի տրամադրման վերաբերյալ որոշման կայացումը**

Բանկի կողմից ակրեդիտիվը տրամադրելու վերաբերյալ վերջնական որոշումը  
կայացվում է հաճախորդի կողմից պահանջվող փաստաթղթերի ամբողջ փաթեթը Բանկ  
ներկայացնելուց հետո առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

<sup>1</sup> Վարկային սահմանաչափի/գծի պայմանները ներկայացված են հետևյալ հղումով՝

[https://ameriabank.am/content.aspx?id=corporate\\_credit\\_line&table=productlistmenu&page=98&lang=33](https://ameriabank.am/content.aspx?id=corporate_credit_line&table=productlistmenu&page=98&lang=33)

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ  
ԱԿՐԵՂԻՏԻՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ակրեդիտիվը թողարկվում է Բանկի որոշմամբ նախատեսված ապահովման պայմանագրերը կնքված լինելու դեպքում: Ընդ որում գույքի գրավադրման դեպքում ակրեդիտիվը թողարկվում է գրավի պայմանագրերը Բանկի համար ընդունելի ձևով ձևակերպելուց և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքելուց, գրավի առարկաները Բանկի պահանջով վերջինիս հետ համագործակցող ապահովագրական ընկերության միջոցով ապահովագրելուց, ինչպես նաև ակրեդիտիվի տրամադրման այլ պայմանները հաճախորդի կողմից կատարվելուց հետո:

**Ակրեդիտիվի տրամադրումը մերժելու գործոնները՝**

- Հաճախորդի կողմից ներկայացված տվյալները /փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը/ անարժանահավատ են կամ ոչ ամբողջական:
- Հաճախորդն ունի ժամկետանց և/կամ դասակարգված պարտավորություններ /այդ թվում՝ երրորդ անձանց հանդեպ/
- և այլն

**Ակրեդիտիվի թողարկման վճարի հաշվարկման կարգը**

Ակրեդիտիվի թողարկման վճարը գանձվում է թողարկման պահին և հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = G * C\% * N$$

որտեղ՝

- A՝ Ակրեդիտիվի թողարկման միջնորդավճար
- G՝ Ակրեդիտիվի առավելագույն գումար
- C%՝ սահմանված թողարկման վճարի չափ
- N՝ Ակրեդիտիվի ժամկետում առկա եռամսյակների քանակ (ոչ լրիվ եռամսյակը համարվում է լրիվ եռամսյակ)

**Ակրեդիտիվի թողարկման վճարի հաշվարկի ներկայացուցչական օրինակ**

- Ակրեդիտիվի առավելագույն գումար՝ 100,000 ԵՎԸ
- Ակրեդիտիվի ժամկետ՝ 200 օր (3 ոչ լրիվ եռամսյակ)
- Ակրեդիտիվի թողարկման վճարի չափ՝ 0.15% յուրաքանչյուր եռամսյակի համար

**Ակրեդիտիվի թողարկման վճարը կկազմի՝**

$$100,000 * 0.15\% * 3 = 450 \text{ ԵՎԸ ( համարժեք ՀՀ դրամ)}$$

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ  
ԱԿՐԵԴԻՏԻՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԱԿՐԵԴԻՏԻՎԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

**1. Այլ բանկերի կողմից Հաճախորդի օգտին թողարկված ակրեդիտիվների սպասարկում**

	<b>Միջնորդավճար</b>
1.1 Ակրեդիտիվի կամ ակրեդիտիվի փոփոխության ծանուցում	20.000 ՀՀ դրամ
1.2 Ակրեդիտիվի տեքստի նախնական կազմում և ակրեդիտիվի պայմանների համաձայնեցում	20.000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
1.3 Փաստաթղթերի ստուգում	35,000 ՀՀ դրամ
1.4 Ակրեդիտիվի հաստատում «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից	ըստ պայմանավորվածության
1.5 Ակրեդիտիվի ներքո գեղչում/ֆինանսավորում Ամերիաբանկ ՓԲԸ-ի կողմից	ըստ պայմանավորվածության
1.6 Թողարկված ակրեդիտիվի կատարում /վճարում, ակցեպտավորում և նեգոցիացիա/	0.5%, նվազագույնը 50,000 ՀՀ դրամ
1.7 Ակրեդիտիվի փոխանցում (transfer)*	յուրաքանչյուր եռամսյակի** համար 0.15% (գանձվում է միանվագ՝ փոխանցման պահին՝ գործողության ողջ ժամկետի համար), նվազագույնը 40,000 ՀՀ դրամ գործողության ողջ ժամկետի համար
1.8 Թողարկող բանկի կողմից փոխհատուցման (Reimbursement) հրահանգի կատարում	ըստ պայմանավորվածության
1.9 Փոխհատուցման (Reimbursement) պարտավորության ներքո վճարում	50.000 ՀՀ դրամ

**2. Հաճախորդի պատվերով թողարկվող ակրեդիտիվներ / գնորդի ակրեդիտիվ**

	<b>Միջնորդավճար</b>
2.1 Չհաստատված ակրեդիտիվի թողարկում*	Յուրաքանչյուր եռամսյակի** համար 0.15% (գանձվում է միանվագ՝ տրամադրման պահին՝ գործողության ողջ ժամկետի համար), նվազագույնը 40,000 ՀՀ դրամ գործողության ողջ ժամկետի համար***

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ  
ԱԿՐԵԴԻՏԻՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

<p>2.2 Այլ բանկի հաստատումով ակրեդիտիվի թողարկում</p>	<p>Յուրաքանչյուր եռամսյակի** համար 0.15% (զանձվում է միանվագ՝ տրամադրման պահին՝ գործողության ողջ ժամկետի համար), նվազագույնը 40,000 ՀՀ դրամ գործողության ողջ ժամկետի համար, հաստատումը՝ ըստ պայմանավորվածության</p>
<p>2.3 Ակրեդիտիվի պայմանների փոփոխություն, այդ թվում՝ չեղյալ համարում</p>	<p>35,000 ՀՀ դրամ, ընդ որում ժամկետի երկարաձգման կամ գումարի ավելացման դեպքում ավելացված մասով կզանձվի նաև թողարկման միջնորդավճար</p>
<p>2.4 Ակրեդիտիվի ներքո վճարում կամ ակցեպտավորում</p>	<p>0.1%, նվազագույնը՝ 7,500 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ</p>
<p>2.5 Փաստաթղթերի ստուգում «առանց տարաձայնությունների» փաստաթղթերի ստուգման համար</p>	<p>35.000 ՀՀ դրամ</p>
<p>2.6 «Տարաձայնություններով» փաստաթղթերի ստուգում</p>	<p>120 ԱՄՆ դոլար կամ համարժեք գործարքի արժույթ, զանձվում է շահառուից</p>
<p>Այլ բանկերի միջնորդավճարները (բացառությամբ հաստատման), փոստային/կապի ծախսերը զանձվում են ըստ դրանց փաստացի մեծության:          * Ակրեդիտիվի վաղաժամկետ դադարեցման դեպքում զանձված միջնորդավճարը վերադարձման ենթակա չէ          ** Ոչ լրիվ եռամսյակը համարվում է ամբողջ եռամսյակ          *** Վարկային սահմանաչափի ներքո թողարկման դեպքում կզանձվի լրացուցիչ միջնորդավճար՝ ըստ պայմանավորվածության</p>	

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Բանկի կողմից վճարումը կատարվում է միմիայն ակրեդիտիվով սահմանված պայմաններին և կարգավորվող միջազգային կանոններին համապատասխան՝ ակրեդիտիվով սահմանված կարգով ներկայացված փաստաթղթերի հիման վրա՝ անկախ հաճախորդի և գործընկերոջ միջև այդ պահին առկա փոխհարաբերություններից: